

Մեծայարգ
Տիար Արա Փալամուտեան
Ատենապետ Բրիտանահայ Համայնքային և Եկեղեցական Խորհուրդի
Լոնտոն, Անգլիա

Սիրելի Պրն. Փալամուտեան, և անդամներ Համկայնքային և Եկեղեցական
Խորհուրդի,

Շնորհակալութեամբ ստացած եմ իր օրին Ձեր 12 Օգոստոս թուակիր
նամակը և սրտագին մաղթանքները իմ քահանայական ձեռնադրութեան
65ամեակին առթիւ: Փառք կուտամ Աստուծոյ որ արժանի ըրաւ զիս տեսնելու
այս երջանիկ օրը:


Ձերմապէս կը գնահատեմ Ձեր թանկագին բարեկամութիւնը: Թող
Բարձրեալն Աստուած շնորհէ Ձեզի և Ձեր սիրելի ընտանիքներքն
քաջաողջութիւն և արեւշատ երջանիկ տարիներ:

Շատ ուրախ եմ յայտնելու որ տակաւին կը ջանամ բերել իմ հոգեւոր
ծառայութիւնը պատարագելով ու քարոզելով Ամերիկայի Հայոց Արեւելեան
Թեմին զանազան եկեղեցիներուն մէջ: Յուսամ յարմար առիթով մը
երջանկութիւնը կ'ունենամ Լոնտոն այցելելու ու վայելելու Ձեր բարեկամութիւնը:

Դարձեալ ընդունեցէք իմ խորին շնորհակալութիւնը Ձեր բարեկամական
ազնիւ զգացումներուն ու ջերմ մաղթանքներուն համար:

Լաւագոյն մաղթանքներով և սիրոյ ողջունիւ

Աղօթարար


Եղիշէ Արք. Կիզիրեան